21 մարտի 2013 թվականի N 246 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ի N 2417-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ ու 56-րդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 47-րդ ու 84-րդ հոդվածների և «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Իջևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 2417-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 3-րդ կետի «ա» ենթակետում «147.32» թիվը փոխարինել «145.21» թվով.

2) որոշման N 4 հավելվածում «որից չմասնավորեցվող» սյունակի «Բնակավայրերի» տողում «92.66» թիվը փոխարինել «90.55» թվով, «Ընդամենը» տողում «147.32» թիվը՝ «145.21» թվով.

3) որոշման N 6 հավելվածում՝

ա. «224-002» և «224-003» ծածկագրերով տողերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

224-002	0.56								հասար. կառ.
224-003	1.25								հասար. կառ.

»,

բ. «Բնակավայրերի հողեր» այունակի «224-016» ծածկագրով տողում «2.24» թիվը փոխարինել «1,94» թվով,

գ. հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «224-0036» ծածկագրով տողով.

«

224-0036	0.3								հասար. կառ.

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ